

ԱՆԿԱՌ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ի («Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՄՄ կանոնագիրք)*, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՄԻ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան ղեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն ղեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա: ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:


Ի լրումն՝


- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ


Վահագն Մամուկյան, FCCA
Տնօրեն




Տնէլ Խաչատրյան, FCCA
Աուդիտի ղեկավար

12 մարտի, 2021թ.

ք.Երևան

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ
 Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2020 հազար դրամ	2019 հազար դրամ
Հասույթ	5	375,471	698,675
Այլ եկամուտ	6	100,064	60,187
		<u>475,535</u>	<u>758,862</u>
Պետությանը հանձնված գույքի ինքնարժեք	6	(96,249)	(60,187)
Օրագրի սպասարկման ծախսեր		(181,631)	(383,759)
Աշխատավարձեր և հարակից հարկեր		(91,661)	(112,875)
Սերվերային համակարգի սպասարկման ծախսեր		(23,269)	(18,126)
Հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծախսեր		(12,579)	(12,668)
Ամորտիզացիոն և մաշվածության ծախսեր		(10,640)	(4,687)
Տարածքի վարձակալության ծախսեր	7	(10,680)	(11,860)
Հաշվապահական ծախսեր		(4,800)	(4,800)
Խորհրդատվական և աուդիտորական ծախսեր		(1,550)	(1,720)
Մարքեթինգի և հանրային կապերի ծախսեր		(1,227)	(1,688)
Կոմունալ ծախսեր		(4,600)	(4,640)
Հեռախոսային և ինտերնետ կապի ծախսեր		(3,956)	(2,878)
Ապահովագրական ծախսեր		(3,911)	(4,039)
Բանկային ծախսեր		(378)	(759)
Գործառնական այլ ծախսեր		(3,482)	(18,263)
		<u>(450,613)</u>	<u>(642,949)</u>
Գործառնական շահույթ		24,922	115,913
Ֆինանսական ծախսեր		(12,771)	(12,964)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից վնասներ		(12,148)	1,303
Շահույթ հարկումից առաջ		3	104,252
Շահութահարկի գծով ծախսեր	8	(2,096)	(21,032)
Զուտ շահույթ		<u>(2,093)</u>	<u>83,220</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հնկերության ղեկավարության կողմից 2021թ. մարտի 12-ին: Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Ավետ Մանուկյան

Տնօրեն



Թի Հքաունթ ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ստելլա Անդրեայան

Գլխավոր հաշվապահ

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2020 հազար դրամ	2019 հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ընթացիկ ակտիվներ			
Ծրագրաապարատային համալիրի արդիականացում		-	96,249
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	42,842	77,998
Դրամական միջոցներ	10	88,210	177,684
		<u>131,052</u>	<u>351,931</u>
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	2,715	3,332
Ոչ կյուրազարկային ակտիվներ	12	147,150	60,045
Հետաձգված հարկային ակտիվներ	13	810	805
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		-	-
		<u>150,675</u>	<u>64,182</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		<u>281,727</u>	<u>416,113</u>
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ	14	127,555	160,560
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	32,172	131,460
		<u>159,727</u>	<u>292,020</u>
Ընդամենը պարտավորություններ		<u>159,727</u>	<u>292,020</u>
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		<u>122,000</u>	<u>124,093</u>
Կանոնադրական կապիտալ		50	50
Կուտակված շահույթ		121,942	124,035
Պահուստային կապիտալ		8	8
Ընդամենը սեփական կապիտալ		<u>122,000</u>	<u>124,093</u>

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	2020 հազար դրամ	2019 հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ծառայությունների իրացումից մուտքեր	486,850	831,065
Այլ մուտքեր	3,075	919
	<u>489,925</u>	<u>831,984</u>
Ծառայությունների գծով վճարումներ	(334,378)	(471,226)
Օրագրաապարատային համալիրի արդիականացման գծով վճարումներ	-	(117,586)
Վճարումներ աշխատավարձի գծով	(68,317)	(82,604)
Հարկային վճարներ	(118,663)	(151,898)
Այլ ելքեր	(2,909)	(2,144)
	<u>(524,267)</u>	<u>(825,458)</u>
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	<u>(34,342)</u>	<u>6,526</u>
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր	(295)	(1,147)
	<u>(295)</u>	<u>(1,147)</u>
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	<u>(295)</u>	<u>(1,147)</u>
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Ստացված փոխառությունների և դրանց գծով տոկոսների մարումից	(54,856)	-
	<u>(54,856)</u>	<u>-</u>
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	<u>(54,856)</u>	<u>-</u>
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	<u>(89,493)</u>	<u>5,379</u>
Արտաբժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	19	313
Դրամական միջոցներ տարեկան դրությամբ	177,684	171,992
Դրամական միջոցներ տարեկան դրությամբ	<u>88,210</u>	<u>177,684</u>

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ
Մեֆական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
31 դեկտեմբերի 2019	50	8	124,035	124,093
Շահույթ	-	-	(2,093)	(2,093)
31 դեկտեմբերի 2020	<u>50</u>	<u>8</u>	<u>121,942</u>	<u>122,000</u>

	Կանոնադրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
31 դեկտեմբերի 2018	50	8	40,815	40,873
Շահույթ	-	-	83,220	83,220
31 դեկտեմբերի 2019	<u>50</u>	<u>8</u>	<u>124,035</u>	<u>124,093</u>